«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԴԵՌԱՀԱՍԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ Սարիբեկյան Աննա

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վաղարշապատի թիվ 9 հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
Գլուխ 1 Դեռահաս տարիքին բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները----4
1.1 Դեռահասության <<ճգնաժամի>> խնդրի վերաբերյալ տեսական տարբեր մոտեցումներ----------5
1.2 Անձնավորության զարգացումը դեռահաս տարիքում----------8
1.3 Դեռահասի բնավորության ձևավորումը----------9
1.4 Ինքնագիտակցության զարգացումը դեռահասության տարիքում----------9
Գլուխ 2 Դեռահասության տարիքին անցնելիս անձի ձեռք բերած կենտրոնական նորագոյացումը----------12
2.1 Դեռահասի շփումն ընկերների հետ----------14
Գլուխ 3 Դեռահասի ուսումնական գործունեությունը և մտավոր զարգացումը--------17
Եզրակացություն----------21
Գրականության ցանկ----------22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռահաս տարիքն ուսուցման և դաստիարակության համար ավելի դժվարին է համարվում, քան կրտսեր և ավագ տարիքները: Ըստ երևույթին, դժվարին է երեխայի՝ չափահաս մարդու վերափոխման բուն պրոցեսը, քանի որ այն կապված է հոգեկանի լուրջ վերակառուցման և մարդկանց հետ հարաբերությունների նախկին, արդեն ստեղծված ձևերի վերացման հետ, կյանքի և գործունեության պայմանների փոփոխման հետ:

Դժվարությունները, որոնք երբեմն հանդիպում են դեռահասի ուսումնական և դաստիարակչական աշխատանքում, երբեմն բացատրվում են այդ տարիքի հոգեկան զարգացման առանձնահատկությունները և օրինաչափությունները բավարար չափով չիմանալու կամ դրանք անտեսելու փաստով:

Յուրաքանչյուր տարիք պահանջում է հատուկ վերաբերմունք իր նկատմամբ: Եվ այդ պատճառով դեռահասի ուսուցման և դաստիարակության ընթացքում շատ բաներ, որ առաջ բնական էին ու պիտանի, դառնում են անընդունելի, այժմ նրա մեջ առաջացնում են առարկություն և դիմադրություն:

Այսպես, ուրեմն, դեռահասների ուսուցման և դաստիարակության ճիշտ հնարքներ և միջոցներ գտնելու համար պետք է լավ իմանալ դեռահաս տարիքի յուրահատկությունը, ֆիզիկական և հոգեկան զարգացման առանձնահատկություն-ները:

Աշխատանքի նպատակը. Բարձրացնել դեռահասների հետ համագործակցության և հաղորդակցման արդյունավետությունը ուսումնական գործընթացում, հաշվի առնելով նրանց տարիքային և հոգեբանական առանձնա-հատկությունները:

Աշխատանքի խնդիրներն են՝

- ուսումնասիրել դեռահաս տարիքին բնորոշ առանձնահատկությունները
- բացահայտել այդ տարիքում առաջ եկող նորագոյացումները
- ուսումնասիրել դեռահասների մտավոր զարգացումը և ուսումնական գործունեության առանձնահատկությունները
- ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

ԳԼՈՒԽ 1. ԴԵՌԱՀԱՍ ՏԱՐԻՔԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեռահաս տարիքը (երբեմն այն անվանվում է անցման տարիք, որովհետև այդ շրջանում է տեղի ունենում յուրատեսակ անցում մանկականից դեպի չափահասություն) կապված է դպրոցականի հոգեկան գործընթացների լուրջ վերակառուցման հետ և այդ պատճառով պահանջում է վճռական (թեպետև աստիճանական) փոփոխություններ կատարել փոխհարաբերությունների, գործունեության կազմակերպման, մեծահասակների, ուսուցիչների կողմից ղեկավարման ձևերում:

Սակայն նորի գոյացումը ժամանակ է պահանջում է: Այն կախված է մեծ թվով պայմաններից և, սրա հետևանքով այդ բոլոր կողմերի փոփոխությունները կարող են նույնանման հաջողությամբ չիրագործվել: Ահա թե ինչու դեռահասի մոտ միշտ գոյակցում են <<մանկականությունն>> ու <<հասունությունը>>: Մյուս կողմից, նույն տարիքն ունեցող տարբեր դեռահասների մոտ էական տարբերություններ են նկատվում ըստ հասունության տարբեր դրսևորումների զարգացման մակարդակի: Դեռահասության փուլն ընդունված է համարել դժվարին ու ճգնաժամային:

Երեկ դեռևս հնազանդ, քաղաքավարի դեռահասը հանկարծ սկսում է հանդես բերել անքաղաքավարություն, կոպտություն, կամակորություն, անկարգապահություն: Նախկինում մեծահասակների ցուցումները, պահանջներն անառարկելիորեն կատարողն այժմ դրանց վերաբերվում է ընտրողաբար-քննադատաբար, գտնում է, որ այդ ցուցումները և պահանջները պետք է բավականին հիմնավորված և տրամաբանորեն համոզիչ լինեն (նրա տեսակետից): Նրա մեջ առաջանում է սեփական կարծիք (որն, ի զարմանք և ի դառնություն մեծահասակների, հաճախ տարբերվում է ընդհանուրի կողմից ընդունված կարծիքից), չափազանցված պատկերացում անձնական արժանապատվության մասին, շուտ վիրավորվելու անբացատրելի հատկություն: (1;էջ126)

Երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման աքսելերացիան հատկապես արտահայտվում է դեռահաս տարիքում: Վերջին տարիներին դեռահասներն ավելի

արագ են զարգանում, քան 50 տարի առաջ: Սեռական հասունացումը նույնպես այժմ ավելի շուտ է սկսվում, քան մի քանի տասնամյակ առաջ: Դա վերաբերում է նաև հոգեկան զարգացմանը, մասնավորապես ինտելեկտի հնարավորություններին, հիշողության որոշ առանձնահատկություններին, քաղաքական և քաղաքացիական հասունության մակարդակին և այլն: Ինչը հատուկ էր ավելի ուշ ժամանակի տարիքներին, այժմ հատուկ է ավելի վաղ տարիքին: Այդ պատճառով, եթե մի քանի տասնամյակ առաջ դեռահաս էր համարվում 12-13-ից մինչև 16տարեկան հասակը, ապա այժմ ավելի ճիշտ կլինի ասել, որ տարիքային ստորին սահմանը մոտավորապես 10-11տարեկանն է, իսկ վերջին սահմանը՝ 14-15 տարեկան հասակը:

Դեռահաս տարիքի բովանդակության բնութագիրը փոխվում է ժամանակի ընթացքում, որովհետև փոխվում են մարդու գոյության կենսաբանական և սոցիալական պայմանները: Մեր երկրի սոցիալական պայմանները մյուս երկրներից տարբերվում են, այդ պատճառով մեր երկրի դեռահասների առանձնահատկությունները նույնպես տարբերվում են մյուս երկրների դեռահասների տարիքային առանձնահատկություններից:

1.1 ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ <<ՃԳՆԱԺԱՄԻ>> ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Շատ երկար ժամանակ է, ինչ տեսական վիճաբանություններ են ծավալվել այն հարցի շուրջ, թե դեռահասության փուլում զարգացման ճգնաժամային երևույթների առաջացման գործում ինչ դեր են խաղում կենսաբանական ու սոցիալական գործոնները;

Արևմտյան հոգեբանները բացառիկ մեծ նշանակություն են տալիս զարգացման կենսաբանական գործոնին, սեռական հասունացմանը, որ իբր ծանր, իսկ երբեմն նաև ուժից վեր բեռ է դեռահասի գիտակցության համար, որը հասցնում է հոգեկան լուրջ ճգնաժամերի ու ցնցումների, դեռահասին բնորոշ այնպիսի գծերի, ինչպիսիք են անհնազանդությունը, կոպտությունը և կամակորությունը, անարխիզմը, դաժանությունը, հիստերիկությունը, ապարդյուն ինքնավերլուծության հակումը, սուբյեկտիվ ապրումներով տարվելը և այլն: Սեռական հասունացման

կապակցությամբ առաջացող նոր զգացումները, մտքերը, անհաղթահարելի հակումները, վերապրումներն իբր իշխում են դեռահասի գիտակցության մեջ, որոշում են նրա ամբողջ վարքը, նրա բոլոր արարքները, այնպես որ դեռահասի հոգեբանական կերպարը վերջ ի վերջո հետևանք է գլխավորապես միայն և զուտ կենսաբանական գործոնի՝ սեռական հասունացման:

Իհարկե, այս կենսաբանական գործոնները որոշակի դեր կատարում են, բայց չի կարելի դրանց տալ որոշիչ նշանակություն և միաժամանակ անտեսել զարգացման սոցիալական պայմանները:

Ամերիկյան հոգեբան Ռ. Կուլենը խիստ քննադատում էր դեռահասի զարգացման կենսաբանական տեսակետը, բայց նա սխալ կերպով կարծում էր, թե տարիքը ոչ այնքան կենսաբանական և հոգեբանական կատեգորիա է, որքան սոցիալ-էթիկական: Նրա կարծիքով, դեռահաս տարիքում կա 3 հիմնական սոցիալ-էթիկական միտում. 1.ազատագրում մեծահասակների ազդեցությունից, ինքնուրույնության ձեռքբերում. 2.լուրջ մոտեցում իր կյանքի ուղու ընտրության, մասնագիտության ընտրության պրոբլեմի նկատմամբ. 3.որոշ սոցիալ-էթիկական նորմաների տիրապետում: Ռ. Կուլենը գտնում է, որ եթե երեխան դեռևս իր առջև չի դնում հիշյալ պրոբլեմները, նա գտնվում է մանկության շրջանում, անկախ նրա ապրած տարիների թվից: Կուլենն ամբողջովին անտեսում է կենսաբանական գործոնները և, որ մեզ համար առանձնապես կարևոր է, անտեսում է տարիքի զարգացման բուն հոգեբանական առանձնահատկությունները: (1;էջ131)

Մի շարք այլ հոգեբանների կարծիքով, դեռահասի հոգեբանական առանձնահատկությունները հետևանք են ոչ միայն և ոչ այնքան կենսաբանական հասունացման ու զարգացման, որքան նրա կյանքի սոցիալական պայմանների և գործունեության փոփոխման, այդ տեսակետից նոր սոցիալական գործոնների առաջացման:

Դեռահասի սոցիալական վիճակի զարգացման բնույթը կայանում է նրանում, որ նա ներգրավվում է մեծահասակների և ընկերների հետ հարաբերությունների և շփման նոր համակարգի մեջ, գրավելով նրանց մեջ նոր տեղ և կատարելով նոր ֆունկցիաներ:

Եվ ծնողները, և ուսուցիչները, և մյուս մեծահասակները դեռահասների հետ իրենց հարաբերությունները պետք է կառուցեն հաշվի առնելով նրա մոտ զարգացող մեծ լինելու զգացումը: Եթե նրանք հաշվի են առնում դեռահասի զարգացող հնարավորությունները, վերաբերվում են նրան հարգանքով և վստահությամբ, օգնում են հաղթահարել ուսուցման և հասարակական օգտակար գործունեության դժվարությունները, ընկերների հետ փոխհարաբերությունների հաստատման մեջ, ապա այդ ամենով ստեղծում են բարենպաստ պայմաններ դեռահասի հոգեկան զարգացման համար:

Դ.Ի. Ֆելդշտեյնը սահմանել է, որ դեռահասության շրջանում անձի սոցիալական զարգացման պրոցեսն անցնում է 3 օրինաչափորեն հերթագայող էտապներով. 1)10-11տ., 2)12-13տ., 3)14-15տ.: (3;էջ13)

Ինչպես նաև Դ.Ի. Ֆելդշտեյնի հետազոտությունները ցույց են տալիս, որ սոցիալական հասունացումն առաջ է անցնում դեռահասի ինտելեկտուալ զարգացումից:(3;էջ14)

Չի կարելի ասել, որ դեռահասը դարձել է լավ կամ վատ, նա դարձել է ուրիշ մարդ զարգացման տարբեր սոցիալական պայմանների հետևանքով:

Ա.Լ. Վենգերը գրում է, որ վերջին 20 տարին կտրուկ սրվել է մանկության պատմական ճգնաժամը, որը սկսվել է 19-րդ դարի վերջին: Այն համակված է ոչ միայն աճող սերնդի հոգեբանական անբարեկեցությամբ, այլև սոցիալ-քաղաքական անկայունությամբ: (3;էջ15-16)

Այստեղից հետևում է,որ դեռահասի տարիքի, նրա առանձնահատկությունների հասկացությունը չունի բացարձակ նշանակություն և դեռահասության տարիքն այդ կապակցությամբ չունի լիովին հստակ, որոշակի և բացարձակ սահմաններ և բնութագրեր: Սակայն երեխաների զարգացման հիմնական գծերը, զարգացման հիմնական բնութագիրը դեռահասության շրջանում առանձնացնել հնարավոր է:

Ամենից առաջ, պետք է նշել, որ այդ տարիքում տեղի է ունենում ինտենսիվ անձնավորության զարգացում:

1.2 ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍ ՏԱՐԻՔՈՒՄ

Դեռահասության տարիքի հոգեբանական կարևորագույն բնութագիրն անձնավորության ինտենսիվ բարոյական ձևավորումն է, բարոյական գիտակցության ձևավորումը, վարքի բարոյա-էթիկական նորմաների տիրապետումը: Դեռահաս տարիքում տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական հասունացում, այլև անձնավորության ակնառու հասունացում, որն իրականանում է շրջապատող իրականության ազդեցության տակ: Դեռահաս տարիքն աշխարհայացքի, բարոյական համոզմունքների, սկզբունքների ու իդեալների, գնահատման դատողությունների ձևավորման տարիք է, որոնցով դեռահասն սկսում է ղեկավարվել իր վարքում:

Նայած այն բանին, թե ինչպիսի բարոյական փորձ է ձեռք բերում դեռահասը, ինչպիսի բարոյական գործունեություն ունի նա, ըստ այնմ էլ ձևավորվում է նրա անձնավորությունը: (1;էջ144)

Համոզմունքների և աշխարհայացքի ձևավորման հետ սերտորեն կապված ձևավորվում են նաև դեռահասների բարոյական իդեալները: Այդ իդեալները բավականաչափ խորն են, բովանդակալից, գործուն և ծառայում են որպես յուրատեսակ բարոյական չափանիշ, որին համապատասխանեցնում է իր վարքագիծը դեռահասը: Կրտսեր դեռահասի համար սովորաբար որպես իդեալ ծառայում է որևէ կոնկրետ մարդ, որի մեջ դեռահասը տեսնում է իր կողմից բարձր գնահատվող հատկությունների մարմնավորումը: Դրանք մեծ մասամբ ծնողներն են, ուսուցիչները, ընկերները, սիրած գրքերի կամ կինոնկարների հերոսները: Բարձր տարիքի դեռահասների համար որպես իդեալներ սկսում են հանդես գալ նաև ընդհանրացված կերպարները որպես իդեալական որակների ամբողջություն:

Դեռահասներն իրենց երազանքներում կարծես նախագծում են իրենց ապագա կյանքն ու գործունեությունը: Երազանքում մարմնավորվում է այն իդեալը, որին նրանք ձգտում են:

1.3 ԴԵՌԱՀԱՍԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Զարգացման առանձնահատկությունների կապակցությամբ պետք է նշել դեռահաս տարիքին յուրահատուկ բնավորության որոշ անհավասարակշռությունը, մեծ դյուրագրգռությունը, տրամադրության համեմատաբար հաճախակի, արագ և կտրուկ փոփոխությունները:

Դեռահաս տարիքում նկատելի զարգացում են ստանում բնավորության կամային գծերը՝ հաստատակամությունը, համառությունը՝ նպատակին հասնելու համար, այդ ճանապարհին արգելքներն ու դժվարությունները հաղթահարելու կարողությունը: Եթե կրտսեր դպրոցականն ամենևին էլ միշտ չէ, որ ինքնուրույն կերպով իր առջև դնում է այնպիսի խնդիրներ ու նպատակներ, որոնք պահանջում են կամք դրանց հասնելու համար, ապա դեռահասն անհամեմատ ավելի հաճախ է ինքն իր առջև դնում այդպիսի նպատակներ, ինքն է պլանավորում դրանց իրականացման համար անհրաժեշտ գործունեությունը:

1.4 ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Դեռահասի անձնավորության զարգացման ամենակարևոր պահերից մեկը նրա մեջ ինքնագիտակցության ձևավորումն է, իրեն որպես անձնավորություն գիտակցելու պահանջմունքը: Դեռահասի մեջ առաջանում է հետաքրքրություն իր նկատմամբ, իր ներքին կյանքի նկատմամբ, իր սեփական անձնավորության արժանիքների նկատմամբ, ինքնագնահատման, իրեն ուրիշների հետ համեմատելու պահանջմունք: Նա սկսում է ուշադրությամբ դիտել իրեն, կարծես իր համար հայտնագործում է իր <<եսը>>, ջանում է ճանաչել իր անձնավորության ուժեղ և թույլ կողմերը:

Ըստ Ս.Լ. Ռուբինշտեյնի դեռահասի ուշադրության կենտրոնն աստիճանաբար փոխանցվում է անհատականության արտաքին կողմից դեպի նրա ներքին կողմը:

Արդյունքում մարդն ինքնահաստատվում է որպես անհատականություն ավելի բարձր մակարդակում: (3;էջ101)

Ինքնագիտակցության ձևավորման սկիզբը և հետագա զարգացումն իր կնիքն է դնում դեռահասի ողջ հոգեկան կյանքի վրա:

Դ.Ի. Ֆելդշտեյնի տվյալներով դեռահասները (10-11տարեկանում) շատ քննադատաբար են վերաբերվում իրենց: Մոտավորապես տղաների 34%-ը և աղջիկների 26%-ն իրենց տալիս են միանգամայն բացասական բնութագրեր: Վարքում ի հայտ են գալիս կոպտություն, դաժանություն, ագրեսիվություն: (3;էջ101)

Դեռահասների ինքնագիտակցության զարգացումն սկսվում է իրենց վարքի գիտակցումից, այնուհետև՝ իրենց բարոյական որակների, բնավորության, իրենց ընդունակությունների գիտակցումից: Սկզբնական շրջանում դեռահասի ինքնագիտակցության հիմքում ընկած են նրա մասին ուրիշների՝ մեծահասակների, խմբի, ընկերների կարծիքները: Կրտսեր դեռահասը կարծես իր վրա նայում է շրջապատողների աչքերով: Տարիքի հետ միասին սկսում է դրսևորվել սեփական անձնավորությունն ինքնուրույնաբար վերլուծելու և գնահատելու միտումը:

Դրա հիման վրա երբեմն ծագում են կոնֆլիկտներ, որոնք առաջանում են դեռահասի հավակնությունների մակարդակի և կոլեկտիվում նրա իրական դիրքի միջև եղած հակասությունից, ինքն իր ու իր անձնավորության հատկությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքի և նրա ու նրա անձնավորության հատկություն-ների նկատմամբ մեծերի ու հասակակիցների ունեցած վերաբերմունքի միջև եղած հակասությունից: Ա.Գ. Կովալյովն արդարացիորեն նշում է, թե որքան կարևոր է դեռահասի անձնավորության ճիշտ գնահատումը, որպեսզի նրա մեջ չառաջանան երկու հակադիր, բայց հավասարապես բացասական զգացմունքներ՝ ուրիշների նկատմամբ գերազանցության զգացմունքը և ոչ լիարժեքության զգացմունքը: (1;էջ156)

Դեռահասների ինքնագիտակցության զարգացման նոր փուլը կապված է տիպարի(օրինակի), յուրատեսակ բարոյական չափանիշի առանձնացման հետ, որի հետ համեմատվելով՝ դեռահասը գնահատում է իր վարքը:

Գնահատելով իր հնարավորությունները մյուսների հետ համեմատած, դեռահասները կարող են ստեղծել ինքնադաստիարակման ծրագիր: Ավելի վառ դա

արտահայտվում է իրենց իդեալներում: Հենց իդեալի բովանդակությունն է ծառայում, որպես ինքնադաստիարակման ծրագիր:

Ինքնադաստիարակման միջոցով դեռահասը պատրաստում է իրեն ներկային և ապագա կյանքին:

Սովորաբար դեռահասի ինքնադաստիարակման մոտիվներ(շարժառիթներ) կարող են լինել.

- ֆիլմերի հերոսներին նմանվելը, որոնք հանդիսանում են տղամարդկության կամ կանացիության մարմնացում
- սեփական հնարավորությունների ապացուցումը
- ընկերների կողմից ընդունված և ճանաչված լինելու ցանկությունը
- հակառակ սեռի ներկայացուցիչների հետ փոխհարաբերություններում հաջողություն ունենալու ցանկությունը: (3;էջ119)

Ակներև է մեծերի կողմից դեռահասների մեջ ինքնադաստիարակման ձգտում առաջացնելու անհրաժեշտությունը: Պետք է դեռահասներին համոզել, որ դա հնարավոր է, օգնել նրանց ճիշտ ըմբռնելու իրենց արժանիքներն ու թերությունները, ցույց տալ ինքնադաստիարակման ճիշտ ուղիներ, վարքի ինքնահսկողության խելացի ձևեր:

ԳԼՈՒԽ 2. ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻՆ ԱՆՑՆԵԼԻՍ ԱՆՁԻ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒՄԸ

Դեառահասության տարիքում կենտրոնական հոգեբանական նորագոյացումը դեռահասի մեջ մեծ լինելու յուրատեսակ զգացմունքի ձևավորումն է, որպես ինքն իր նկատմամբ մեծի ունեցած վերաբերմունքի սուբյեկտիվ վերապրում, որպես մեծերի կոլեկտիվում իբրև այդ կյանքի լիարժեք և իրավահավասար մասնակից ապրելու դեռահասի պատրաստականության զգացում:

Մեծ լինելու զգացմունքն արտահայտվում է դեռահասի կողմից իր նկատմամբ որպես մեծի ունեցած վերաբերմունքի մեջ և իր մեծ լինելն օբյեկտիվորեն հաստատելու ցանկության մեջ: Նա շրջապատողներից հավակնում է նույն վերաբերմունքն իր նկատմամբ, ցանկություն է հանդես բերում իր կյանքի որոշ կողմեր զերծ պահելու մեծերի միջամտությունից, պաշտպանելու իր հայացքներն ու համոզմունքները, չնայած մեծերի հակազդեցությանը:

Դեռահասը հակված է ակնհայտորեն չափազանցնելու այդ տեղաշարժերի ու փոփոխությունների նշանակությունը: Գերագնահատելով իրենց հնարավորություն-ները, դեռահասները հանգում են այն համոզմանը, որ իրենք գրեթե չեն տարբերվում մեծերից, և պահանջում են, որ մեծերն էլ իրենց հետ վարվեն ինչպես հավասարը հավասարին: Առաջանում է հակասություն(կոնֆլիկտ)՝ մեծերի կյանքում որպես իրավահավասար անդամներ մասնակցելու դեռահասների պահանջմունքի և դրա իրական հնարավորությունների անհամապատասխանության, կենսափորձի բացակայության միջև:

Մեծերի վերաբերմունքը նրա նկատմամբ որպես <<փոքրի>> խորապես վիրավորում է նրան:

Պարզ է, որ դեռահասի հետ շփվելիս պետք է հանդես բերել տակտ և հնարամտություն: Պետք է հրաժարվել կտրուկ կարգադրություններ, հրամաններ, պահանջներ ներկայացնելուց: Դաստիարակչական աշխատանքը պետք է հիմնվի դեռահասի նկատմամբ մեծերի վերաբերմունքի աստիճանական փոփոխության վրա. անհրաժեշտ է ընդունել նրանց համեմատաբար մեծ անկախության և ինքնուրույնության իրավունքները: Իհարկե, այս ամենը պետք է լինի որոշ բանական

սահմաններում: Դեռահասներին պետք է ազատել մանրախնդիր խնամակալությունից:

Մեծ լինելու զգացմունքի ձևավորման հետ կապված՝ դեռահասների մեջ երևան է գալիս մի գիծ, որը կարելի է բնորոշել որպես մեծերի նկատմամբ բարձր քննադատականության դրսևորում: Մեծ լինելու հատկանիշներից մեկը դեռահասը համարում է մեծերի թերություններն ու վրիպումները նկատելու իր կարողությունը: Դա արվում է ոչ թե այն բանի համար, որ նվաստացնի նրանց, այլ որպեսզի հաստատի իր մեծահասությունը: Եվ դեռահասի դատողությունների ընթացքն այսպիսին է՝ եթե ես կարող եմ տեսնել մեծերի թերությունները, ապա դա մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ ես մեծ եմ:

Գիտակցության քննադատականությունն արտահայտվում է և այն բանում, որ դեռահասները հակված չեն ամեն ինչին հավատալու: Նրանց մեջ առաջանում է քննադատական վերաբերմունք մեծերի խոսքերի նկատմամբ, ըստ որում երբեմն դա ստանում է քննադատամոլության ձև. դեռահասները բոլոր դեպքերում պահանջում են տրամաբանական բացատրություն՝ ինչու դա պետք է այդպես լինի և ոչ թե այլ կերպ:

Չափահասության գործընթացում մյուս ուղղությունը կապված է գենդերային պատկանելիության հետ: Այսպես, տղա-դեռահասները ձգտում են համա-պատասխանել տղամարդկային իդեալին, զարգացնում են իրենց մեջ <<իսկական տղամարդու>> որակներ: Դա մի կողմից-ուժն է, կամքը, համարձակությունը, տղամարդկությունը, մյուս կողմից հավատարմությունը բարեկամությանը և ընկերությանը: Դրա համար էլ դեռահասները հետաքրքրություն են ցուցաբերում գեղարվեստական գրականության հերոսներին:

Նմանվելու օրինակներ են դառնում ոչ միայն կինոնկարների, գեղար-վեստական ստեղծագործությունների հերոսները, այլև մեծահասակները, հասակակիցները, որոնք առանձնանում են համարձակությամբ, հնարամտությամբ, սպորտային ունակություններով, ֆիզիկական ուժով:

Մեծ լինելու զգացմունքի վերլուծության կապակցությամբ կանգ առնենք մի հարցի վրա, որը վերջին ժամանակներս սկսել է ուշադրություն գրավել. դա տղա-դեռահասների բնավորության այսպես կոչված կանացիացման(ֆեմինիզացիա՝

լատիներեն femina-կին բառից) հարցն է: Վերջին տարիներին տղա-դեռահասների բնավորության մեջ սկսել են նկատվել այնպիսի գծեր, ինչպես՝ լուրջ որոշումներ կայացնելու անկարողություն, վախ պատասխանատվությունից, պասիվություն, ղեկավարելու ցանկություն չունենալ, ինքնուրույնության բացակայություն, նկատվում է թուլակամություն, զգայունակություն, այսինքն՝ այն, ինչ հատուկ չէ տղամարդու բնավորությանը: Սա որոշ չափով կապված է նաև այն բանի հետ, որ այժմ ուսուցչական կադրերի մեծ մասը կանայք են(մոտ 80%):(1;էջ164-165)

Դեռահաս աղջկա կանացի իդեալն առանձնանում է գեղեցկությամբ, գրավչությամբ, արտաքին ոճային տեսքով: Եթե դեռահաս տղաները կողմնորոշվում են ֆիզիկական հատկանիշներով, ապա դեռահաս աղջիկներն առանձնացնում են մտավոր որակները:

Ընտանիքում ոչ ճիշտ դաստիարակության հետևանքով կանացիությունը կարող է դառնալ ոչ գրավիչ: Աղջիկների մի մասն ուզում է ունենալ տղամարդկային հատկանիշներ՝ կամք, համարձակություն, դիմացկունություն: Այս հարցում պետք է կարևորել և ուսումնասիրել նաև հասակակիցների և ընկերների հետ շփումը:

2.1. ԴԵՌԱՀԱՍԻ ՇՓՈՒՄՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Հոգեբանական դիտումները ցույց են տվել, որ դեռահասության տարիքում շատ վառ կերպով է դրսևորվում ընկերների հետ շփվելու ձգտումը, հասակակիցների կոլեկտիվում լինելու ձգտումը: Դ.Բ. Էլկոնինն ու Տ.Վ. Դրագունովան նույնիսկ հակված են՝ ընկերների հետ շփումն առանձնացնելու որպես դեռահասի կյանքի մի առանձին ոլորտ, գտնելով, որ հաղորդակցումը գոյություն ունի իբրև մի առանձնահատուկ գործունեություն, որի ընթացքում իրականանում են մեծ լինելու զգացմունքը, հարաբերությունների սոցիալ-բարոյական նորմաների յուրացումը(1;էջ167):

Որքան ավելի անբարեհաջող են մեծերի և դեռահասների հարաբերություններն, այնքան վերջիններիս կյանքում ավելի մեծ տեղ են գրավում ընկերների հետ ունեցած կապերը և ավելի խորն է նրանց ազդեցությունը:

Դեռահասության տարիքի համար բնորոշ է անձնական բարեկամության զգացմունքի, բարեկամական շփման իսկական պահանջմունքի ակներև զարգացումը: Բարեկամության դրդապատճառները գնալով խորանում են: Բարեկամանում են արդեն ոչ թե այն պատճառով, որ նստում են միևնույն նստարանին կամ ապրում են միևնույն շենքում, ինչպես հաճախ պատահում է կրտսեր դպրոցականների հետ, այլ ընդհանուր հետաքրքրությունների, համատեղ գործունեության, փոխադարձ հարգանքի և համակրանքի, վստահության ու ըմբռնման, մոտիկ հայացքների և ճաշակի հիման վրա:

Դ.Բ. Էլկոնինը և Տ.Վ. Դրագունովան խոսում են բարեկամ փնտրելու հատուկ գործունեության առկայության մասին, որն, ըստ նրանց տերմինաբանության, կրում է <<կողմնորոշող-փորձող>> բնույթ: Դեռահասության տարիքում բարեկամական հարաբերություններն ավելի խորն են, բովանդակալից և կայուն, կրում են հուզական-չթուլացող բնույթ: Բարեկամական հարաբերությունների ընդհարումը հաճախ ընկալվում է շատ հիվանդագին կերպով: (1;էջ167-168)

Դեռահասների ընկերական և բարեկամական փոխհարաբերությունները մանրամասնորեն ուսումնասիրել է Ի.Վ. Ստրախովը: Նա տարբերում է դեռահասների փոխհարաբերությունների երեք հիմնական ձևեր՝ մարդամոտություն, ընկերականություն և բարեկամություն, որոնք նրանց անձնավորության զարգացման կարևոր գործոնն են: Մարդամոտությունը ենթադրում է ընդհանուր գործերի համատեղ կատարում, շփում ուսումնական աշխատանքում, ժամանցի ընթացքում, տարբեր տեսակի փոխօգնություն: Այս բոլորն ուղեկցվում են հաղորդակցման յուրահատուկ հուզական մթնոլորտով: Ընկերականությունն ավելի բարդ երևույթ է: Նրա հոգեբանական հիմքն ընկերական սերտ կապն է, տարբեր հարցերի մասին ունեցած կարծիքների միասնությունը, փոխադարձ համակրանքի զգացմունքը և այլն: Բարեկամության համեմատությամբ ընկերականությունը փոխհարաբերությունների ծագումնաբանական վաղ ձևն է: Բարեկամությունն ավելի ընտրողական է, ավելի մտերիմ, ենթադրում է դեռահասների սերտ մոտեցում, հոգեբանական սերտ կոնտակտ, հարաբերությունների հավատարմություն: Դեռահասների իսկական բարեկամությունը կրում է ակտիվ-գործուն բնույթ, որը դրսևորվում է բարեկամին

օգնելու պատրաստակամության, նրա թերությունների բարյացակամ քննադատության մեջ: (9)

Միշտ չէ, որ դեռահասների բարեկամությունն անառարկելիորեն կրում է դրական բնույթ: Երբեմն այն առաջանում է անառողջ հետաքրքրությունների կամ զվարճությունների, միացյալ դատարկ ժամանցի հիման վրա:

Որպես կանոն, դեռահասի համար դասարանի կոլեկտիվի հասարակական գնահատականն ավելի արժե, քան ուսուցիչների ու ծնողների կարծիքը, և նա սովորաբար շատ նրբազգացորեն է արձագանքում ընկերական կոլեկտիվի բարեկամական ներգործությանը:

Դեռահասության տարիքում տղաների և աղջիկների փոխհարաբերություններն էական փոփոխություններ են կրում: Նրանք սկսում են հետաքրքրվել միմյանցով, ցանկանում են դուր գալ միմյանց: Սրա հետ կապված ուժեղանում է հետաքրքրությունը նաև սեփական արտաքինի նկատմամբ: Դեռահասը սկսում է հոգ տանել գրավիչ լինելու մասին:

Հակառակ սեռի ներկայացուցիչների նկատմամբ հետքրքրությունը շատ տղաների մոտ սկզբում ունի ծավալուն, ընդհանրացված բնույթ: Սրա տիպական դրսևորումները կրտսեր դեռահասի մոտ ստանում են աղջիկներին <<գժվեցնելու>> բնույթ: Ավելի ուշ այդ հարաբերությունները կորցնում են իրենց անմիջականությունն, առաջ են գալիս կաշկանդվածություն, երկչոտություն և ամաչկոտություն: Որոշ դեռահասների մոտ այս ամենը դրսևորվում է ուղղակիորեն, մյուսները դրանք թաքցնում են արհեստական անտարբերության կամ հակառակ սեռի նկատմամբ <<արհամարհանքի>> քողի տակ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ընկերների հետ շփվելը դեռահասության տարիքում հսկայական, երբեմն վճռական ազդեցություն է գործում անձի ձևավորման վրա:

ԳԼՈՒԽ 3. ԴԵՌԱՀԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դեռահասության տարքին անցնելու հետ կապված է դպրոցականի ուսումնական գործունեության էական վերակառուցումը: Ուսումնական գործունեության նոր, ավելի բարձր մակարդակը որոշվում է նրա ինքնուրույնության աստիճանով: Դեռահասության տարիքի սկզբնական շրջանում նկատվում է ուսումնական գործունեության զարգացման մակարդակների մեծ բազմազանություն-ամենացածր մակարդակից, որի ժամանակ բացակայում են ինքնուրույն աշխատանք կազմակերպելու տարրական կարողությունները, մի շարք միջակա ձևերով, որոնց ժամանակ, օրինակ, ինքնուրույն աշխատանք դիտվում է միայն տնային առաջադրանքները կատարելիս, մինչև ամենաբարձր մակարդակը, երբ ինքնուրույն կերպով յուրացվում է և նոր նյութը, և նույնիսկ գիտությունների նոր բնագավառները:

Իրականության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ընդհանուր աճի հետ միասին դեռահասների մեջ զգալիորեն ուժեղանում է գիտակից վերաբերմունքն ուսման նկատմամբ: Իրենց ուսումնական գործունեության մեջ նրանք աստիճանաբար անցնում են նոր, ավելի բարձր մակարդակի, որը կապված է նոր վերաբերմունքի հետ, խոր գիտելիքների հանդեպ, որոնք ձեռք են բերում անձնավորութային իմաստ:

Դեռահասների մեջ ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու գործում առավել էական նշանակություն ունի, ինչպես ցույց են տվել հետազոտությունները, ուսումնական նյութի գիտական-գաղափարական բովանդակալիությունը, նրա կապը կյանքի և պրակտիկայի հետ:

Գիտությունների հիմունքներին տիրապետելու ընթացքում ոչ միայն հարստանում է կյանքի փորձը և ընդլայնվում է մտահորիզոնը, այլև ձևավորվում և զարգանում են դեռահասների հետաքրքրությունները: Այս պրոցեսում դիտվում է անհատական տարբերությունների լայն ընդգրկում: Այդ պատճառով դժվար է միանշանակ գնահատել դեռահասի հետաքրքրությունների տարիքային առանձնահատկությունները: Դրանք կարող են լինել և լայն, և նեղ, և կայուն, և անկայուն, հաճախ փոփոխվող, և խորը, և մակերեսային:

Դեռահասների հետաքրքրությունները բավականաչափ կայուն են՝ կրտսեր դպրոցականների հետաքրքրությունների համեմատությամբ: Մենք հաճախ ենք նկատում, թե ինչպես դեռահասության տարիքում առաջացած հետաքրքրությունը պահպանվում է նաև պատանու մոտ՝ խորանալով և հարստանալով բովանդակությամբ, հետագայում դառնալով մասնագիտական ուղղվածության հիմքը:

Դեռահասության տարիքը զարգացման այն փուլն է, որտեղ ապագայի մասին մանկական երազանքները հերթափոխվում են սեփական հնարավորություններն ու կյանքի հանգամանքները հաշվի առնող խորհրդածություններով: Ոմանք փորձում են երազանքներից գործի անցնել, մյուսներն իրենց ուժերը մտովի չափում են ապագայում բացվելիք հնարավորությունների հետ, երրորդները փորձում են պարզել, թե իրենց ուժերն ինչ չափով են համապատասխանում մասնագիտության պահանջներին, իսկ չորրորդները ձգտում են իմանալ, թե մասնագիտության բովանդակությունը որքանով է համընկնում նրա մասին իրենց ունեցած պատկերացումների հետ: Շատերը սկսում են վախենալ սխալներ թույլ տալու հնարավորություններից:

Դեռահասները տեղեկություններ են հավաքում իրենց դուր եկող մասնագիտության և այն ուսումնական հաստատությունների մասին, որոնցում այդ գծով կարելի է սովորել: Նրանք մտերիմ ընկերների հետ զանազան հարցեր են քննարկում, հետաքրքրվում են համադասարանցիների նպատակներով: Տարիքի առաջացման հետ զուգընթաց մեծանում է այն դեռահասների թիվը, որոնք ցանկանում են մասնագիտություն ձեռք բերել բարձրագույն կրթություն ստանալու ճանապարհով:

Ուսումնական գործունեության բնույթի և ձևի փոփոխությունը, մտքի հարցասիրության աճը դեռահասից պահանջում են ավելի բարձր և կազմակերպված մտավոր գործունեություն:

Դեռահասության տարիքում էական փոփոխությունների են ենթարկվում հիշողությունը և ուշադրությունը: Դեռահասության տարիքի հիմնական բնութագիրն այդ ֆունկցիաների կամային կողմի ուժեղացումն է: Զարգանում է իր հոգեկան ֆունկցիաները կազմակերպելու և վերահսկելու, նրանց ղեկավարելու հմտություն:

Չի կարելի ասել, թե դեռահասի հիշողությունն <<ընդհանրապես>> ավելի լավ է զարգացած, քան կրտսեր դպրոցականինը, չնայած դեռահասության տարիքում նկատվում է խոսքային և վերացական նյութի մտապահման զգալի առաջընթաց: Դեռահասներն սկսում են գիտակցորեն օգտագործել մտապահելու և մտաբերելու հատուկ եղանակներ: (1;էջ183)

Վերջապես, դեռահասի հիշողության առանձնահատկություն է առավել բարդ զուգորդությունների հաստատումը, նոր նյութի կապը հնի հետ:

Ուշադրության զարգացումն աչքի է ընկնում որոշ հակասականությամբ. մի կողմից, դեռահասության տարիքում ձևավորվում է կայուն, կամային ուշադրություն, մյուս կողմից տպավորությունների, ապրումների առատությունը, դեռահասի բուռն ակտիվությունը և իմպուլսիվությունը հաճախ հասցնում են ուշադրության անկայունության, նրա արագ շեղմանը:

Դեռահասության տարիքում տեղի են ունենում էական տեղաշարժեր մտածողական գործունեության մեջ: Դեռահասի համար բնորոշ է մտածողության քննադատականության բավականաչափ զարգացումը: Դեռահասը չի վստահում միայն ուսուցչի կամ դասագրքի հեղինակությանը, նա ձգտում է ունենալ սեփական կարծիք, իր հայացքներն ու դատողությունները: Ինքնին դա մտածողության արժեքավոր հատկանիշ է, և այն ամեն կերպ պետք է զարգացնել:

Քննարկվող տարիքի կարևոր առանձնահատկությունն ակտիվ, ինքնուրույն, ստեղծագործական մտածողության ձևավորումն է: Ինչպես ասում են հոգեբանները, դեռահասության տարիքը սենզիտիվային (բարենպաստ) է այդպիսի մտածողության զարգացման համար: Այդ պատճառով պետք է ըստ ամենայնի խթանել դեռահասների ինքնուրույն ստեղծագործական մտածողությունը: (1;էջ190)

Հենց դեռահասության տարիքում դպրոցի և արտադպրոցական հիմնարկների ուսումնա-դաստիարակչական աշխատանքի ազդեցությամբ, գիտությունների հիմունքներն ուսումնասիրելու ազդեցությամբ սկսում են ձևավորել և վառ կերպով դրսևորվել դեռահասների ընդունակություններն այս կամ այն գործունեության նկատմամբ: Իհարկե ընդունակությունների դրսևորում նկատվում են նաև կրտսեր դպրոցական և նույնիսկ նախադպրոցական տարիքում, բայց նրանք սկսում են իսկապես զարգանալ հենց դեռահասության տարիքում: Դա բացատրվում է այն

բանով, որ հենց դեռահասության տարիքում են առաջանում խոր, գործուն, կայուն հետաքրքրությունները, ձևավորվում գիտակից, ակտիվ վերաբերմունք շրջապատի նկատմամբ, զարգանում ինքնուրույն, ստեղծագործական մտածողությունը:

Առաջին հերթին սկսում են վառ կերպով դրսևորվել երաժշտական, գեղարվեստական-կերպարվեստային, գրական-ստեղծագործական ընդունակությունները: Մաթեմատիկայի լուրջ և սիստեմատիկ ուսուցման հետ միասին ձևավորվում են մաթեմատիկական ընդունակությունները: (1;էջ191-192)

Այսպիսով, դեռահաս տարիքը հոգեբանության տեսակետից այնքան յուրահատուկ և հետաքրքիր է, որ այս տարիքի երեխաների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքի հաջողությունը կախված է նրանց տարիքային հոգեբանական առանձնահատկությունների իմացումից և դրանք հաշվի առնելուց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշել էինք, սոցիալ-տնտեսական խնդիրների սրումն առաջին հերթին ազդել է հասարակության ամենախոցելի շերտերի և խմբերի՝ հատկապես երեխաների վրա: Նրանք հանդիսանում են հասարակության ամենաքիչ պաշտպանված և ամենաշատ տառապող խումբը: Ընկել է երեխաների ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական առողջության մակարդակը: Էապես իջնում է նրանց մտավոր-կրթական պոտենցիալը, փոխվել են բարոյա-մշակութային արժեքները:

Այս խնդիրներն առավել սուր կերպով արտահայտվում են դեռահասության տարիքում, երբ տեղի են ունենում հիմնային փոփոխություններ ինքնագիտակցության ոլորտում:

Ուսումնասիրելով դեռահասների հոգեբանական առանձնահատկությունները, գալիս ենք այն եզրակացության, որ առաջին հերթին այս տարիքում տեղի է ունենում բուռն ֆիզիկական զարգացում և սեռական հասունացում, ինքնագիտակցության ձևավորում, ինչպես նաև նրանք ձեռք են բերում մեծահասության զգացում և նրանց համար առավել կարևոր է դառնում հասակակիցների հետ շփումը: Եվ հենց այս բոլոր առանձնահատկություններն են, որ մեծ ազդեցություն են ունենում երեխայի դաստիարակության , զարգացման և հետագա կյանքի վրա:

Հաշվի առնելով հիմնախնդրի շուրջ առկա տեսական ուսումնասիրությունները առաջարկում ենք դրսևորել առանձնահատուկ վերաբերմունք դեռահասների նկատմամբ թե ծնողների և թե ուսուցիչների կողմից: Քանզի տալով նրանց ինքնադրսևորվելու հնարավորություն, տարիքին համաձայն, կապահովեք հոգեբանական շատ պահանջմունքների բավարարումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կրուտեցկի Վ. Ա. - Մանկավարժական հոգեբանության հիմունքները
2. Խուդոյան Սամվել – Անձի զարգացման ճգնաժամային տարիքները
3. Волков Б. С. – Психология подростка
4. https://www.poqrikishkhan.am/
5. http://bgpk.edu22.info/
6. https://www.psychologos.ru/articles/view/psihologiya-podrostkovogo-vozrasta
7. https://www.pravmir.ru/kak-ponyat-podrostka/
8. http://www.kuban-lyceum.ru/uchashchimsya-i-roditelyam/psikhologicheskie-osobennosti-podrostkovogo-vozrasta.php
9. https://nauka-pedagogika.com/psihologiya-19-00-01/dissertaciya-osobennosti-sootnosheniya-obschitelnosti-i-trevozhnosti-podrostkov-1